



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2014թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 103 - 24

Նախաձեռնող՝

«ՍՈՒՆԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ

Ք. Երևան, Վ. Սարգսյան փ., 2. 10

Գործունեությունը՝ Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի 20-րդ փողոց 51/1, 51/2, 51/3, 51/4, 51/5 հողամաս հասցեներում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 103 - 24

«28» հունիսի 2024թ.

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի 20-րդ փողոց 51/1, 51/2, 51/3, 51/4, 51/5 հողամաս հասցեներում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Աղբերք բնակավայր, 20-րդ փողոց 51/1, 51/2, 51/3, 51/4, 51/5 հողամաս հասցեներ

**Ներածական մաս.** «ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությունը Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի 20-րդ փողոց 51/1, 51/2, 51/3, 51/4, 51/5 հողամաս հասցեներում նախատեսում է կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ.» ենթակետի և 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի «ա.» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները՝ № 03052021-05-0003 /ծածկագիրը՝ 05-009-0265-0077/, № 17112022-05-0048 /ծածկագիրը՝ 05-009-0265-0079/, № 14112022-05-0020 /ծածկագիրը՝ 05-009-0265-0023/, № 14112022-05-0021 /ծածկագիրը՝ 05-009-0265-0024/, № 14112022-05-0036 /ծածկագիրը՝ 05-009-0265-0083/, Ճամբարակի համայնքապետարանի կողմից 06.11.2023թ. տրված № 60-Ճ նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը նախատեսվում է կառուցել սեփականության իրավունքով «ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի պատկանող հողամասերում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 7.34 հա: Նշված տարածքում



նախատեսվում է կառուցել 5000 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան և 110/2x0.8 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան, այնուհետև ենթակայանը միացնել «Կապուտակ» 110 կՎ ՕԳ-ի թիվ 220 միջանկյալ հենարանին՝ ներանցման եղանակով (մոտ 20մ), դեպի արևային կայանի տարածքում կառուցվող ենթակայանի 110 կՎ պորտալ: Նախատեսվող արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է: Ներկայումս նշված տարածքում չի իրականացվում որևէ գործունեություն, իսկ նախատեսվող գործունեության արդյուքնում չեն կառուցվելու այլ շինություններ: Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է տեղական ինքնակառավարման մարմինների և հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները և այլն:

Հայցվող տարածքը տեղակայված է Սևանա լճից մոտ 1,6 կմ հեռավորության վրա, իսկ «Սևան» ազգային պարկից» 1 կմ հեռավորության վրա: Դեպի տարածք տանող ճանապարհի գլխավոր մուտքը գոյություն ունեցող գրունտային ճանապարհից գտնվում է մոտ 89 մ հեռավորության վրա: Նախատեսվող արևային կայանը Ֆոտովոլտային էլեկտրակայան է, որի առավելագույն դրվածքային հզորությունն ըստ վահանակների կազմում է 5.499 ՄՎտՊ, իսկ արևակայանի առավելագույն հզորությունը կազմում է 5.0 ՄՎտ: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 9322 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 590 Վտ առավելագույն հզորությամբ: 20 հատ՝ 250 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8 կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է):

Տարածքում շենք-շինություններ նախատեսված չեն, քանի որ «ՍՈԼԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն նախատեսվող կայանի անմիջապես հարևանությամբ կառուցել և շահագործում է ևս մեկ արևային կայան, որը կահավորված է օպերատորական և պահեստային շինություններով:

Արևային կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2.0 մ բարձրությամբ մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):

Գործունեության շինարարության ժամանակահատվածում օգտագործվելու են տեխնիկատրանսպորտային միջոցներ, որոնց վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են մեկ տարի՝ ըստ ժամանակացույցի:

Շինարարական փուլի ընթացքում տեխնիկական ջրի պահանջարկը կբավարարվի ավտոցիստեռնի միջոցով՝ համայնքապետարանի հետ նախորդ պայմանավորվածության պարագայում, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով՝ առևտրային հիմունքներով: Զուրը շինհրապարակում կպահվի հատուկ տարողություններում: Արևային կայանի պլանների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվեն համապատասխան տարողության փակ բաքեր:



Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են՝ մալուխ, մետաղ՝ ալյումին, պողպատ, ներկ, մեկուսիչ նյութեր, բետոն, խիճ, փայտանյութ: Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումինե: Հենասյունների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյունների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի համար նախատեսված հողի հիմնական մասը զբաղեցնում են մարգագետնասևահողերը, որը բնորոշ է բարձր դիրք ունեցող խոնավ դաշտավայրերին ու սարահարթերին: Մարգագետնասևահողերին բնորոշ են կրազերծվածությունը, կնձիկահատիկային կառուցվածքը, իսկ հումուսի պարունակությունը բարձր է՝ մինչև 15%, ունեն թույլ թթվային ռեակցիա, կատիոնային փոխանակության մեծ կլանունակություն, մեխանիկական կազմը՝ ծանր կավավազային և կավային է: Քանի որ օգտահանման ենթակա բերրի հողաշերտի հզորությունը կազմում է միջինը 20 սմ, ստացվում է օգտահանված մեծ ծավալի բերրի հող, որի պահեստավորման և պահպանման համար մեծ մակերեսներ են պետք, ուստի պահեստավորման և պահեստավորված բերրի հողի պահպանության ծախսերից խուսափելու նպատակով որոշվել է արևային վահանակների տեղադրման ժամանակ հանել միայն ենթակայանի և ներքին ճանապարհների կառուցման տարածքների բուսաշերտը և բերրի հողը: Այն մոտավոր հաշվարկներով կկազմի 120 մ<sup>3</sup>, որի հանումը, պահեստավորումը և օգտագործումը պետք է իրականացնել համաձայն ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշման պահանջների:

Պայմանավորված ռելիեֆային առանձնահատկություններով՝ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ, որին բնորոշ են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված տարածքները: Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի համար նախատեսված բուն տարածքում նախնական ուսումնասիրությունների տվյալներով բացակայում են Կարմիր գրքյան տեսակները: Սակայն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է ներգրավել կենսաբազմազանության ուսումնասիրման մասնագետ՝ անձնակազմի վերապատրաստման և աշխատանքների ընթացքում դաշտային ուսումնասիրությունների իրականացման նպատակով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ, այն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացող միջոցառումների ցանկը:



Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու նպատակով նախատեսվում է.

**օդային ավազան՝**

- պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար,
- խուսափել շարժիչների անգործությունից,
- միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները,
- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհի շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության,
- ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին :

**Ջրային ռեսուրսներ՝**

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով տեղադրել 2 ջրի բաք,
- շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողությամբ պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով (տարան տեղադրվելու է բիոզուգարանին մոտ հատվածում, հաշվի առնելով նախատեսվող ջրի քանակությունը),
  - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,
  - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի,
  - շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար տեղադրել բիոզուգարան:


**Հողային ռեսուրսներ՝**

- գործունեության տարածքում յուրի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, -ավելցուկային գրունտ չի առաջանա,
- հանված հողային զանգվածը կօգտագործվի հետլիցքի և տարածքի բարեկարգման համար:

**Ազդեցություն կենսաբազմազանության վրա՝**

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան ձեռնարկել պահպանության միջոցառումներ,
  - պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան,
  - շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, մթնոլորտային տեղումների քանու



ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել է հնարավորինս նախկին տեսքի: Շինարարական սարքավորումներն ապամոնտաժելուց իրականացնել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

ՇՄԱԳ հաշվետվության Բնապահպանական կառավարման պլանում ամփոփվել է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակների դեպքում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով:

**Պարճառարանական մաս.** Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ճամբարակի համայնքապետարանի շենքում և Աղբերք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շինարարության և շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական լուծումների և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում և Աղբերք բնակավայրում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի՝ ներառյալ հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցերի իրականացումը:

2. Արևակայանի /էլեկտրական ցանցեր, ենթակայան, բաշխիչ սարքավորումներ/ կառուցման և շահագործման ընթացքում անվտանգության գոտու ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել 2023 թվականի ապրիլի 13-ի N363-Ն որոշման պահանջներով,



Էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքներն իրականացնել Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

3. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմնին:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ճամբարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

6. Շահագործման ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների (այդ թվում վտանգավոր թափոններ՝ բանեցված յուղեր, յուղոտված լաթեր, յուղերով աղտոտված ավազ, վնասված պանելներ և վահանակներ) կուտակումը, հեռացումը կամ տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում, կամ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԻՉ ՄԱՍ

«ՍՈՒԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի 20-րդ փողոց 51/1, 51/2, 51/3, 51/4, 51/5 հողամաս հասցեներում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Լերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աննա Սարգսյան